

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն փաստաթղթով սահմանվում է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) աշխատակիցների և (կամ) սովորողների հարցման անցկացման կարգը, նպատակները, պահանջները, պարբերականությունը:
- 1.2 Հարցումներն իրականացվում են հոգաբարձուների խորհրդի կամ գիտական խորհրդի կամ ռեկտորի կամ ուսխորհրդի կողմից առաջադրված հարցաշարով:
- 1.3 Հարցումներն իրականացվում են Համալսարանում հարցումներ իրականացնող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:
- 1.4 Հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից, որից 3-ը առաջադրում է գիտական խորհուրդը, 2-ը՝ ռեկտորը, 2-ը՝ ուսխորհուրդը:
- 1.5 Հանձնաժողովի անդամի փոխոխությունը կատարվում է նրան առաջդրողի որոշմամբ:
- 1.6 Հանձնաժողովի նիստն իրավագոր է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելիի մասնակցության դեպքում:
- 1.7 Հանձնաժողովի նախագահն ընտրվում է Հանձնաժողովի անդամների կողմից՝ Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելի ձայներով:
- 1.8 Հանձնաժողովն որոշումներն ընդունում է նիստին մասնակից անդամների ձայների մեծամասնությամբ:
- 1.9 Հարցումների նպատակն է.
 - Համալսարանի կառավարմանը վերաբերող կարծիքների բացահայտումը.
 - կրթական միջավայրի ու կրթության կազմակերպման որակի բարելավումը.
 - դասախոսական կազմին առնչվող խնդիրների բացահայտումը.
 - սովորողներին առնչվող խնդիրների բացահայտումը,
 - Համալսարանի գործունեության հետ առնչվող այլ հարցերի բացահայտումը:
- 1.10 Հարցումների կազմակերպման պահանջներն են.
 - քվեարկության գաղտնիությունը,
 - հարցման գործընթացի համակարգվածությունը,
 - հարցումների պարբերականությունը,
 - հարցումների շարունակականությունը:

2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- 2.1 Հարցումներն իրականացվում են ըստ անհրաժեշտության:
- 2.2 Հարցումներին իրավունք ունեն մասնակցելու.
 - համահամալսարանական խնդիրներին առնչվող հարցերի վերաբերյալ՝ Համալսարանի հաստիքային բոլոր աշխատակիցները,

- կրթական միջավայրի ու կրթության կազմակերպման որակի բարելավման հարցերի վերաբերյալ՝ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը (այսուհետ՝ Դասախոսներ), Համալսարանի ուսումնաօժանդակ անձնակազմը, Համալսարանի առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողները և միջին մասնագիտական ուսուցման ծրագրով սովորողները,
 - Դասախոսներին առնչվող հարցերի վերաբերյալ՝ Համալսարանի Դասախոսները,
 - ուսանողներին առնչվող հարցերի վերաբերյալ՝ Համալսարանի առկա ուսուցման ուսանողները,
 - սովորողներին առնչվող հարցերի վերաբերյալ՝ Համալսարանի առկա ուսուցման ուսանողները և միջին մասնագիտական ուսուցման ծրագրով սովորողները:
- 2.3 Հարցումն համարվում է իրականացված, եթե դրան մասնակցել են հարցմանը մասնակցելու իրավունք ունեցող անձանցից կեսից ավելին:
- 2.4 Հարցմանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակները՝ առաջադրված հարցաշարի բովանդակությունից ելնելով, կազմում և հաստատում է Հանձնաժողովը:
- 2.5 Հարցմանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակները և առաջադրված հարցաշարի բովանդակությունը Հանձնաժողովը հրապարակում է հարցման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:
- 2.6 Հարցմանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակներում ճշգրտումները կատարում է Հանձնաժողովը, մինչև քվեարկության ավարտը ներկայացված համապատասխան դիմումների առկայության դեպքում: Հարցմանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակներում ճշգրտումների մասին Հանձնաժողովը կազմում է արձանագրություններ:
- 2.7 Հարցումներն իրականացվում են փակ, գաղտնի քվեարկությամբ՝ հարցաթերթիկների միջոցով:
- 2.8 Հարցաթերթիկը պետք է ներառի.
- առաջադրված հարցաշարը,
 - հարցաշարն ու՛մ կողմից է առաջադրված,
 - հարցման նպատակը,
 - քվեարկության ձևը:
- 2.9 Հարցումների արդյունքները մշակում և հրապարակում է հանձնաժողովը՝ հարցումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.10 Հարցումների արդյունքները նախատեսված են Համալսարանի ներքին օգտագործման համար:
- 2.11 Հարցաթերթիկները պահվում են Համալսարանի արխիվում՝ առնվազն մեկ տարի, իսկ Հանձնաժողովի արձանագրությունները՝ երեք տարի թղթային և հինգ տարի՝ էլեկտրոնային տարբերակներով:
- 2.12 Հանձնաժողովի արձանագրության ձևը բերված է հավելված 1-ում:
- 2.13 Հանձնաժողովի արձանագրությունները, բացառությամբ անձերին առնչվող տեղեկատվությունից, բաց են հրապարակման համար:

4. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

- 4.1 Դասախոսներին առնչվող հարցերի վերաբերյալ հարցումն (այսուհետ՝ Դասախոսների հարցում) իրականացվում է առնվազն տարին մեկ անգամ:
- 4.2 Դասախոսների հարցումն անցկացվում է գիտխորհրդի կողմից առաջադրվող Համալսարանի ռազմավարական ծրագրից բխող հարցաշարով:
- 4.3 Դասախոսների հարցման արդյունքների վերլուծությունն արտացոլվում է Որակի ապահովման բաժնի տարեկան զեկույցում, որը պարունակում է եզրակացություններ Համալսարանում դասախոսների՝ ուսումնական ռեսուրսներից, դասավանդման գործընթացից, աշխատանքային պայմաններից, գիտական հետազոտություններից բավարարվածության վերաբերյալ և Համալսարանի ստորաբաժանումների գործունեության բարելավմանն ուղղված առաջարկներից: Որակի ապահովման բաժնի

տարեկան գեկույցում մեկամսյա ժամկետում քննարկվում է ֆակուլտետների խորհուրդներում, այնուհետև՝ Համալսարանի գիտական խորհրդում, որը ընդունվում է կրթության և հետազոտությունների որակի բարելավման գործողությունների տարեկան ծրագիր և ժամանակացույց, որը հաստատում է Համալսարանի ռեկտորը:

- 4.4 Կրթության և հետազոտությունների որակի բարելավման գործողությունների տարեկան ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Համալսարանի Որակի ապահովման բաժինը:

5. «ԴԱՍԱԽՈՍՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՋՔԵՐՈՎ» ՀԱՐՑՈՒՄԸ

- 5.1 Համալսարանում «Դասախոսը ուսանողների աչքերով» հարցումը Համալսարանի որակի ապահովման համակարգի մեխանիզմներից է և իրականացվում է «Որակյալ կրթություն» ռազմավարական նպատակի՝ Խնդիր 1.3 կետի պահանջի համաձայն:
- 5.2 Հարցումն իրականացվում է սովորողների կողմից Դասախոսի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման նպատակով: Հարցման արդյունքներից ելնելով Համալսարանում պետք է մշակվեն և ներդրվեն մեխանիզմներ՝ բացթողումները և թերությունները շտկելու, ուսումնական միջավայրն առավել ուսանողակերևորուն դարձնելու համար:
- 5.3 «Դասախոսը ուսանողների աչքերով» հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո՝ հաջորդ կիսամյակի առաջին ամսվա ընթացքում: Ավարտական կուրսերում երկրորդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև ավարտական որակավորման քննությունների սկիզբը:
- 5.4 Կիսամյակի ավարտին Հանձնաժողովը կազմում է «Դասախոսը ուսանողների աչքերով» հարցման անցկացման ժամանակացույց՝ ըստ մասնագիտությունների և կուրսերի:
- 5.5 «Դասախոսը ուսանողների աչքերով» հարցումն անցկացվում է գնահատման հարցաթերթով (Հավելված 2), որում ուսանողը 5 միավորանոց սանդղակով պատասխանում է հարցերին: Հարցաթերթն ունի նաև տեղեկատվական հատված և առաջարկությունների համար նախատեսված ազատ բաժին:
- 5.6 «Դասախոսը ուսանողների աչքերով» հարցումն անցկացվում է ուսանողների խմբի առնվազն 60% մասնակցությամբ: Ուսանողների ներկայության ավելի ցածր տոկոսի դեպքում հարցումը կազմակերպվում է մեկ այլ օր՝ հաստատված ժամանակացույցից ոչ ավելի, քան 5 օր շեղումով:
- 5.7 «Դասախոսը ուսանողների աչքերով» հարցման գնահատման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր դասախոսի /դասընթացի/ համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով և միջին քառակուսային շեղումով, որտեղ միջին թվաբանականը արտացոլում է միջին խմբային արձագանքը, իսկ միջին քառակուսային շեղումը՝ խմբի ներսում (գնահատման մասնակիցների միջև) փոխհամաձայնության աստիճանը:
- 5.8 «Դասախոսը ուսանողների աչքերով» հարցման արդյունքների ամփոփ և անանուն վերլուծությունները տեղադրվում են Համալսարանի կայքում:
- 5.9 «Դասախոսը ուսանողների աչքերով» հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոններում: Զննարկման արդյունքում, անհրաժեշտության դեպքում համապատասխան ամբիոնում մշակվում են առաջարկություններ՝ ուղղված տվյալ Դասախոսի դասավանդման որակի բարելավմանը և բացահայտված թերությունների շտկմանը:
- 5.10 «Դասախոսը ուսանողների աչքերով» հարցման արդյունքներն օգտագործվում են դասախոսի վարկանիշավորման, խրախուսման, պաշտոնում ընտրվելու և առաջխաղացման գործընթացներում: Հարցման արդյունքում պարբերաբար անբավարար գնահատվող Դասախոսի հարցը քննարկվում է ֆակուլտետի խորհրդում՝ Դասախոսի հետագա պաշտոնավարման նպատակահարմարության հարցը որոշելու համար:

6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն կարգը հաստատում է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհուրդը:

6.2 Սույն կարգն ընդունելու պահից ուժը կորցրած է համարվում «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում հարցումների կազմակերպման» և «Դասախոսների կարիքների գնահատման հարցումների կազմակերպման» կարգերը:

Գիտական խորհրդի նախագահ՝ ստորագրություն Յ.Վ.Թոքմաշյան

Գիտական քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան

Հավելված 2

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի՛ ուսանող/ուսանողուհի, ՇՏՀ-ում դասավանդման որակը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անցկացվում է «Դասախոսը ուսանողների աչքերով» հարցում: Ձեր անկողմնակալ գնահատականները և անկեղծ պատասխանները կօգնեն բարելավել համալսարանում կիրառվող դասավանդման և ուսումնախոսություն մոտեցումները, ուսումնական միջավայրը դարձնել ավելի ուսանողակենտրոն:

Գնահատումը կատարվում է 2-ից 5 միավորանոց սանդղակով, որտեղ
5-ը համարվում է գերազանց,
4-ը՝ լավ,
3-ը՝ բավարար,
2-ը՝ անբավարար:

Ա	առարկան																
Բ	դասախոսը																
1	Նյութը մատուցում է պարզ և մատչելի:																
2	Ժամանակը լսարանում արդյունավետ է օգտագործում:																
3	Հետևում է լսարանի կարգապահությանը:																
4	Ընդգծում է մատուցվող նյութի կարևոր կողմերը, մասնագիտական և գործնական նշանակությունները:																

